ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2016 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2016 թվականին եգիպտացորենի մշակության համար պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ *Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի _____ ___-ի
N _____ -Ն որոշման

ԿԱՐԳ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում 2016 թվականին եգիպտացորենի մշակության համար հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***եգիպտացորենի սերմ (այսուհետ՝ սերմ)՝*** եգիպտացորենի հատիկի ստացման համար PR35P12 հիբրիդային սերմ, սիլոսի ստացման համար՝ PR31Y43 հիբրիդային սերմ.

2) ***միջոցառումների մասնակից՝*** պետական աջակցության տրամադրմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ.

3) ***պետական աջակցություն՝*** եգիպտացորենի մշակության համար հողօգտագործողներին անհատույց սերմի տրամադրում.

4) ***պետական աջակցության տրամադրմանն ուղղված միջոցառումներ (այսուհետ՝ միջոցառումներ)՝*** եգիպտացորենի մշակության համար հողօգտագործողներին անհատույց սերմի տրամադրմանն ուղղված աշխատանքների իրականացում:

II. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է միջոցառումների իրականացման գործընթացը.

2) տեղական ինքնակառավարման մարմինները, հիմք ընդունելով սույն կարգի եգիպտացորենի մշակությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հողօգտագործողների դիմումները, համայնքների վարչական սահմաններում գտնվող վարելահողերի նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական), իսկ

վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները, շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, վկայականի համարը և եգիպտացորենի մշակության համար նախատեսված վարելահողի մակերեսը.

3) համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարելահողերի վարձակալները դիմումները, անձնագրերի և վարձակալության իրավունքի պետական գրանցման վկայականների պատճենները ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմ.

4) տեղական ինքնակառավարման մարմինները և շրջանների վարչակազմերը եգիպտացորենի մշակության համար դիմումներն ընդունում են՝ հաշվի առնելով սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջը.

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը, հիմք ընդունելով սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկանքները և 3-րդ ենթակետում նշված փաստաթղթերը, ընդհանրացնում և նախարարություն են ներկայացնում համապատասխան տեղեկություններ:

4. Պետական աջակցության տրամադրման հիմք են հանդիսանում սույն կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետում նշված տեղեկությունները:

5. Պետական աջակցությունը տրամադրվում է՝

1) եգիպտացորենի մշակության համար նախատեսված վարելահողերը ոռոգման ջրով ապահովված և ցանքսին նախապատրաստված լինելու դեպքում.

2) 1 հեկտարի դիմաց եգիպտացորենի հատիկի ստացման համար՝ 16 կիլոգրամ սերմի, իսկ սիլոսի ստացման համար՝ 18 կիլոգրամ սերմի չափով:

6. Նախարարության կողմից ձեռք բերված սերմը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջոցով, նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկության հիման վրա, անհատույց կտրամադրվի հողօգտագործողներին:

7. Տրամադրված սերմով ագրոտեխնիկական կանոններով սահմանված ժամկետում եգիպտացորենի ցանքս չկատարելու դեպքում սերմի արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե:

8. Միջոցառումների ֆինանսավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N 34-Ա որոշման «Սերմերի և ազնվացեղ խոշոր եղջերավոր անասունների արժեքի մասնակի սուբսիդավորում» միջոցառման համար հատկացված ֆինանսական միջոցներով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ